

**ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԵԻ «ՃԳՆԱԺԱՄԸ» ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԵԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ***

ՀՏԴ 336.1(479.25)

ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ

*ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր,
տնտեսագիտության դոկտոր,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
ashotmarkos@rambler.ru*

ԷԼԵՈՆՈՐԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

*ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ֆինանսաօրինակային
ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
meleonora06@rambler.ru*

Ցանկացած երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և արտաքին տնտեսական հարաբերությունների կառուցման գործում Էական նշանակություն ունի արտաքին պետական պարտքի կառավարումը: Հատկապես վերջին 20-30 տարիների ընթացքում համաշխարհային տնտեսության զարգացման հիմնական միտումներից մեկը դարձել է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ-ի) նկատմամբ արտաքին պետական պարտքի առաջանցիկ աճը: Ըստ որում, վերջին տարիներին բազմաթիվ երկրների արտաքին պետական պարտքի աճի տեմպերը գերազանցել են ՀՆԱ-ի աճի տեմպերին: Իր հերթին, արտաքին պետական պարտքի ձևավորումն ունի սահմաններ (սահմանափակումներ), ինչը պահանջում է փոխառու միջոցների արդյունավետ օգտագործում: Այդ տեսանկյունից բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը, որի արտաքին պետական պարտքը մոտ է ՀՆԱ-ի նկատմամբ օրենսդրությամբ սահմանված առավելագույն շեմին և նոր պարտքի ներգրավման համար անհրաժեշտ է առաջին հերթին լուծել արտաքին պարտքի կառավարման արդյունավետության հիմնախնդիրը: Վերջինս ենթադրում է, որ արտաքին պետական պարտքի աճի տեմպերը պետք է ավելի դանդաղ լինեն, քան երկրի հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներինը, ինչպիսիք են՝ ՀՆԱ-ի, զբաղվածության, զուտ արտահանման և մի շարք այլ մակրո-ցուցանիշների աճի տեմպերը:

Հեղինակները փորձել են 2000-2018թթ. ժամանակահատվածի համար որոշակի մեթոդաբանության կիրառմամբ գնահատել ՀՀ արտաքին պետական պարտքի արդյունավետությունը:

Բանալի բառեր՝ արտաքին պետական պարտք, արտաքին պետական պարտքի արդյունավետության, համեմատական արդյունավետության գործակից, վճարային հաշվեկշիռ, ՀՆԱ-ի հավելված, զբաղվածության հավելված, զուտ արտահանման հավելված:

* Հոդվածը ներկայացվել է 28.04.2019թ., գրախոսվել՝ 24.05.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

Պետական պարտքի «ճգնաժամը»: Ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում դժվար է պատկերացնել որևէ երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն առանց արտաքին պետական պարտքի ներգրավման: Ավելին, հատկապես վերջին 20-30 տարիների ընթացքում ինչպես համաշխարհային, այնպես էլ ազգային տնտեսությունների առաջընթացի անհրաժեշտ գործիքներից մեկը (հաճախ նաև՝ ամենակարևորը) դարձել է փոխատվական կապիտալը: Քանի որ ֆինանսական միջոցները չեն կարող միաժամանակ մատչելի լինել տնտեսավարող բոլոր սուբյեկտների համար, դրանցից շատերը, ցանկանալով ապահովել անխափան ֆինանսատնտեսական գործունեություն, այդ միջոցները ձեռք են բերում այլ աղբյուրներից՝ ներգրավման ճանապարհով՝ առաջացնելով փոխատվական հարաբերություններ: Փողի՝ կուտակման և որպես վճարման միջոց գործառնությունների զարգացումը հանգեցրեց ֆինանսական միջոցների համակենտրոնացմանն ու վերաբաշխմանն այդ միջոցների կարիքն ունեցող ինչպես գործարարությամբ զբաղվող սուբյեկտների, այնպես էլ առանձին տնտեսական միությունների ու տարածաշրջանների միջև: Ասվածի ապացույցն է այն իրողությունը, որ զարգացած երկրները կամ նրանց տնտեսական միավորումները (օրինակ՝ ՏՀԶԿ-ն, Եվրամիությունը) ֆինանսավորում են զարգացող երկրների տնտեսությունները:

Փոխատվական կապիտալի միջազգային շուկայի շրջանակներում որևէ երկրի կառավարությունը, բանկերը կամ մասնավոր ընկերությունները, ինչպես նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունները միջոցներ են տրամադրում այլ երկրի կառավարությանը, բանկերին ու մասնավոր ընկերություններին: Հաճախ երկիրը հանդես է գալիս երկու դերում՝ միաժամանակ (և՛ որպես վարկառու, և՛ որպես վարկատու), քանի որ միջազգային փոխառությունների շարժը չի կարող միակողմանի ընկալվել:

Միջազգային վարկերի ու փոխառությունների ներգրավումը որոշակի պարտավորություններ է առաջացնում ոչ միայն վարկատուների, այլև տվյալ երկրի համար՝ դրանք առավել արդյունավետ օգտագործելու առումով: Հայտնի է, որ Նշված փոխատվական միջոցները, որպես կանոն, նպատակային են և նախատեսված են որոշակի ոլորտի (ոլորտների) և առանձին ծրագրերի իրականացման համար: Որպեսզի տվյալ երկիրը կարողանա օգուտ քաղել օտարերկրյա փոխառություններից, բացի նպատակայնության ապահովումից, անհրաժեշտ է դրանք հնարավորին չափ արդյունավետ օգտագործել թե՛ ֆինանսական միջոցների տնտեսման և թե՛ արտասահմանյան փորձի ու տեխնոլոգիաների ներդրման իմաստով: Անհրաժեշտ է հիշել, որ ապագայում առաջընթաց ապահովելու համար պետության գերիմրիկն է հետագա սերունդներին թողնել ոչ թե անցած ժամանակաշրջանի կուտակած պարտավորությունները, այլ կայուն տնտեսական հիմք (ներուժ), որի վրա հնարավոր կլինի ստեղծել առողջ ու արագ զարգացող արդյունավետ տնտեսություն:

Երկրների կառավարությունները առողջապահության, կրթության, գիտության, բնակչության սոցիալական ապահովության ու պաշտպանության, սոցիալական ու արտադրական ենթակառուցվածքների, ազգային անվտանգության ու պաշտպանության ոլորտներում ծախսեր կատարելու և այլ ծառայություններ մատուցելու առաքելություն ունեն: Այդպիսի ծրագրերի իրականացման համար երկրների (այդ թվում՝ ամենահարուստ) կառավարությունները ստիպված են փոխառու միջոցներ ներգրավել, քանի որ սեփական զանապետական համակարգում հավաքագրված գումարները միշտ չէ, որ բավարարում են: Դրա պատճառներից մեկը կարող է լինել հարկային եկամուտների հավաքագրումը կանխատեսվածից քիչ չափով, կամ փոխառու միջոցներով կառավարությունը կարող է ծածկել բյուջեի ժամանակավոր դեֆիցիտը (պակասուրդը)՝ առանց սպառման ծախսերի կրճատման: Երբեմն կառավարությունները բախվում են ինչպես տնտեսության օպտիմալ ճյուղային, այնպես էլ ժողովրդագրական կառուցվածքների ձևավորման դժվարությունների հետ,

որոնք հաճախ ծագում են, երբ տվյալ երկրի տնտեսության կառուցվածքը չի համապատասխանում ներքին ու արտաքին շուկաների պահանջներին, կամ երբ երկրի բնակչությունը ծերանում է, ուստի և՛ կենսաթոշակների վճարման, առողջապահական ու սոցիալական բնույթի մյուս ծախսերն աճում են ավելի արագ տեմպերով, քան պետության դրամական եկամուտներն ու ՀՆԱ-ն:

Պետք է նկատել, որ փոխառու ֆինանսական միջոցների ձեռքբերումը հատկապես արդարացվում է տնտեսական աճի անկման կամ դանդաղեցման պայմաններում, երբ ավելի ձեռնադուրս է փոխառու ֆինանսական միջոցներ ներգրավել, քան բարձրացնել տնտեսավարող սուբյեկտների ու քաղաքացիների հարկային բեռը: Կառավարության կողմից պետական պարտքի ներգրավման համար էականն այն է, որ կառավարությունը պետք է ի վիճակի լինի ձևավորելու առաջնային հավելյալ եկամուտներ (մասնավորապես՝ հարկային եկամուտները պետք է գերազանցեն կառավարության ծրագրերի իրականացման համար պարտքով վերցված գումարները), որոնք կբավարարեն սահմանված ժամկետներում (համապատասխան ժամանակացույցով) գումարները հետ վերադարձնելու համար:

Երկրի պետական պարտքը կարող է նպաստել ապագա տնտեսական աճին, սակայն միայն այն դեպքում, երբ խստորեն ապահովվում է ֆինանսական կարգապահությունը և նպատակ է դրվում արդյունավետ կառավարել այն: Անընդմեջ ավելացող պետական բյուջեի պակասուրդը ենթադրում է, որ վատագույն դեպքում այդպիսի բյուջետային քաղաքականությունը կարող է հանգեցնել ֆինանսական դեֆոլտի, իսկ լավագույն դեպքում արտաքին պետական պարտքի ֆինանսավորման ձևազնդին ապագա սերունդների համար կարող է բեռ դառնալու:

Նույնիսկ Եվրագոտու շատ երկրներում (որոնք ունեն բնակչության բարձր կենսամակարդակ և առողջ տնտեսություն) պետական պարտքի ծավալներն ավելացան 2008 թվականի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո, երբ հարկաթուղքետային անհավասարակշռությունը կայունացնելու համար անհրաժեշտ էին բյուջետային խնայողությունների կտրուկ միջոցառումներ, որոնք միևնույն ժամանակ ուղեկցվեցին կառուցվածքային բարեփոխումներով:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից մեկ տասնամյակ անց պետք է ենթադրել, որ բազմաթիվ երկրների կառավարություններ դասեր են քաղել Նախկին սխալներից, սակայն միջազգային կազմակերպությունների (ՎԶԲ, ԱՄՅ, ՀԲ) տվյալներն այլ բանի մասին են վկայում: Այդ ժամանակից ի վեր շատ զարգացած երկրներում զգալիորեն ավելացել է պետական պարտքը, սակայն ավելի անհանգստացնողն այն է, որ, օրինակ, ԱՄՅ-ի մասնագետների կանխատեսմամբ զարգացող, ցածր եկամուտներով 59 երկրներից 24-ում ներկայումս առկա է պարտքային ճգնաժամ կամ այդպիսի ճգնաժամի հավանականությունը շատ բարձր է²⁴⁰: Եվ եթե այդպիսի կանխատեսումներն իրականանան, ապա, ինչպես միշտ, ամենաշատը տուժելու են այդ երկրների քաղաքացիների խոցելի ու անպաշտպան խմբերն ու շերտերը:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո՝ 2008-2012 թվականներին, նկատելիորեն ավելացավ նաև ամենազարգացած երկրների տնտեսական միության՝ ՏՀԶԿ երկրների արտաքին պետական պարտքը, որի աճի տեմպերը դանդաղել են վերջին տարիների ընթացքում: Առանձին գնահատականների համաձայն՝ ՏՀԶԿ անդամ երկրների կառավարությունները ինչպես 2017թ.-ին, այնպես էլ 2018թ.-ին տարբեր ֆինանսական շուկաներից ներգրավել են շուրջ 10.5 տրիլիոն ԱՄՆ դոլարի չափով փոխառություններ: Ընդհանուր առմամբ, այդ երկրների ընդհանուր պարտքը 2018թ.-ին կազմել է շուրջ 45 տրիլիոն ԱՄՆ դոլար, 2017թ.-ին՝

²⁴⁰ "Percentage of public debt to GDP around the world 2018", ինտերնետային հղումը՝ <https://www.gfmg.com/global-data/economic-data/public-debt-percentage-gdp>.

շուրջ 43.6 տրիլիոն ԱՄՆ դոլար, մինչդեռ 2008թ.-ին այն կազմում էր 25 տրիլիոն ԱՄՆ դոլար²⁴¹:

Նշված օրինակները վկայում են, որ անգամ արդյունաբերական զարգացած երկրներում հարկաբյուջետային քաղաքականության ընդլայնման կարևորագույն գործիքներից շարունակում է մնալ փոխառու ֆինանսական միջոցների ներգրավումը, ինչը հանգեցնում է պետական (կամ կենտրոնական կառավարությունների) պարտքի ավելացմանը: Ցածր տոկոսադրույթները և շուկայական կայուն պայմանները նույնիսկ ՏՀԶԿ երկրներում ստեղծել են «անկախ թողարկողների համար խթանող ֆինանսավորման միջավայր»²⁴², ինչն իր հերթին, կառավարություններին հնարավորություն է տալիս ցածր գնով ֆինանսավորել փոխառությունների պահանջները:

ԱՄՅ-ի վերլուծությունները վկայում են, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո ընկած ժամանակահատվածում ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում պետական պարտք/ՀՆԱ հարաբերությունը մեծացել է՝ հասնելով ամսախառեպ բարձր ցուցանիշների: Եվ քանի որ գրեթե բոլոր երկրներում դրամավարկային պայմանները խստացվում են, ուստի և պարտքի բեռի կարգավորման գործիքակազմի սորացումն էլ ավելի է կարևորվում:

Դիտարկելով զարգացած երկրներում պետական պարտքի չափերի շարժը (դինամիկան)՝ կարող ենք նկատել այնպիսի օրինաչափություն, որ զարգացած երկրների մեծ մասում պետական պարտք/ՀՆԱ հարաբերությունը նշանակալի է, իսկ մի շարք երկրներում այն գերազանցում է 100%-ը: Այսպես, ԱՄՆ-ում պետական պարտք/ՀՆԱ հարաբերությունը 2012թ.-ի 103.4%-ից 2018թ.-ին հասել է 106.1%-ի, Բելգիայում՝ համապատասխանաբար՝ 104.3%-ից 101.2%-ի, Իտալիայում՝ 123.4%-ից 130.3%-ի, Սինգապուրում՝ 105.1%-ից 112.8%-ի, Ֆրանսիայում՝ 90.6%-ից 96.7%-ի, Միացյալ Թագավորությունում՝ 84.1%-ից 87.4%-ի, Ֆինլանդիայում՝ 53.9%-ից 60.5%-ի (իսկ Գերմանիայում այն նվազել է՝ 79.9%-ից հասնելով 59.8%-ի): Պետական պարտք/ՀՆԱ ամենաբարձր ցուցանիշը, ինչպես 2012թ.-ին, այնպես էլ 2018թ.-ին, եղել է ճապոնիայում՝ 2012թ.-ին կազմելով 229.1%, իսկ 2018թ.-ին՝ 238.2%:

Պետական պարտք/ՀՆԱ հարաբերության ամենացածր ցուցանիշը գրանցվել է Յունկոնգում, որտեղ այն 2012թ.-ին կազմում էր 0.545%, իսկ 2018թ.-ին՝ 0.052%, իսկ մյուս ամենացածր ցուցանիշը Բրունեյ-Դուրասսավլամինն է, համապատասխանաբար՝ 2.1% և 2.4%:

Արաբական Միացյալ Էմիրություններում պետական պարտք/ՀՆԱ հարաբերության մեծությունը 2012թ.-ին կազմել է 16.9% և 2018թ.-ին՝ 17.8%: Այդ երկրի հետ համադրելի ցուցանիշներ են արձանագրվել Ռուսաստանի Դաշնությունում՝ համապատասխանաբար 11.9% և 15.3%²⁴³:

Ինչ վերաբերում է ԵԱՏՄ մյուս երկրներում դիտարկվող ցուցանիշի մեծությանը, ապա միևնույն աղբյուրը նշում է, որ պետական պարտք/ ՀՆԱ հարաբերությունը Բելառուսում 2012թ.-ին կազմում էր 36.9%, իսկ 2018թ.-ին՝ 55.9%, Ղազախստանում՝ համապատասխանաբար՝ 12.1% և 17.8%, Ղրղզստանում՝ 48.9% և 54.9%: Իսկ Հայաստանի հարևան երկրներում առկա է հետևյալ պատկերը. Թուրքիայում պետական պարտք/ՀՆԱ հարաբերության մեծությունը 2012թ.-ին կազմել է 32.7%, իսկ 2018թ.-ին՝ 32.3%, Իրանի Իսլամական Հանրապետությունում՝ 12.1% և 44.2%, Վրաստանում՝ 34.8% և 43.9%, իսկ Ադրբեյջանում՝ 13.7% և 48.3%²⁴⁴:

²⁴¹ Նույն տեղում:

²⁴² OECD Sovereign Borrowing Outlook 2018, <http://www.oecd.org/governance/oecd-sovereign-borrowing-outlook-23060476.htm>.

²⁴³ Տե՛ս Percentage of public debt to GDP աղյուսակը. <https://www.gfmaq.com/global-data/economic-data/public-debt-percentage-gdp>.

²⁴⁴ Նույն տեղում:

Վերը շարադրվածի տեսանկյունից կարևորագույն հարցն այն է, թե ինչպես է, օրինակ, ճապոնիայի նման երկիրը կառավարում իր պետական պարտքը, որը գերազանցում է ՀՆԱ-ի մեծությունն ավելի քան երկու անգամ, մինչդեռ Ուկրաինան, որտեղ 2015թ.-ին պետական պարտքի մեծության հարաբերությունը ՀՆԱ-ին կազմում էր շուրջ 30%, հայտնվել էր ֆինանսական դեֆոլտի եզրին: Թեև պետական պարտքի մեծությունը նշանակություն ունի, սակայն շատ ավելի կարևոր է պարտքը սպասարկելու (պարտքի դիմաց վճարումներ կատարելու) երկրի ունակությունը: ճապոնիայի պարտքի զգալի մասը ներքին է, և եթե երկրների մեծ մասը պարտք են վերցնում հիմնականում օտարերկրյա պարտատերերից, ապա ճապոնիայի դեպքում պետական պարտքը ձևավորվում է «ծագող արևի երկրի» քաղաքացիների փոխատվություններից, ինչն էլ զգալիորեն նվազեցնում է չվճարման (կամ դեֆոլտի) ռիսկը: Երբ պարտքը վերահսկվում է օտարերկրյա պետությունների, պարտատերերի կողմից (օրինակ, Ուկրաինայի դեպքում. այդ երկիրը չէր կարողանում կատարել 3 միլիարդ ԱՄՆ դոլարի պարտատոմսերի վերաբերյալ պարտավորությունները), կարող է զգալի լարվածություն առաջանալ պարտավորությունների կատարման իմաստով և դրանով իսկ նկատելիորեն վնասել երկրի ֆինանսական ու միջազգային վարկանիշներին:

Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը և դրա արդյունավետության գնահատումը: Աղյուսակ 1-ում բերված են ՀՀ արտաքին պետական պարտքի մեծությունները և դրանց կառուցվածքը 2000-2018թթ. ժամանակահատվածում: Աղյուսակ 1-ի տվյալներից հետևում է, որ 2018թ.-ին 2000թ.-ի համեմատությամբ ՀՀ արտաքին պետական պարտքն ավելացել է ավելի քան 6.5 անգամ:

ՀՀ արտաքին պետական պարտքի կազմում ավելի արագ տեմպերով ավելացել է ՀՀ կառավարության պարտքը, ինչի հետևանքով նրա բաժինը արտաքին պետական պարտքի կառուցվածքում 2000թ.-ի 75.7%-ից 2018թ.-ին հասել է 90%-ի, և, համապատասխանաբար, նվազել է ՀՀ կենտրոնական բանկի պարտքը (թեև այն բացարձակ արժեքով 2000-2018թթ. ավելացել է ավելի քան 3 անգամ, սակայն արտաքին պետական պարտքի կազմում նրա բաժինը 2000թ.-ի 20.4%-ից 2018թ.-ին հասել է 9.9%-ի: ՀՀ արտաքին պետական պարտքի կտրուկ աճ է արձանագրվել 2009թ.-ին, երբ նախորդ տարվա համեմատությամբ արտաքին պետական պարտքի մեծությունը գրեթե կրկնապատկվեց: Այդ հանգամանքը կապված էր ՀՀ տնտեսության վրա համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների (երբ ՀՆԱ-ն դրամական արտահայտությամբ նվազեց 14.1%-ով իսկ դոլարային արտահայտությամբ՝ 25.84%-ով, ինչը աշխարհի ամենաբարձր ցուցանիշներից մեկն է) հաղթահարմամբ: Աղյուսակում բերված ժամանակագրական շարքի 19 տարիների ընթացքում միայն երկու տարիներին (2005 և 2014 թվականներին) չի ավելացել ՀՀ արտաքին պետական պարտքը, մնացած տարիներին այն տարբեր չափերով ավելացել է:

Աղյուսակ 1

ՀՀ արտաքին պետական պարտքը և կառուցվածքը 2000-2018 թվականներին

Տարիները	Արտաքին պետական պարտք		այդ թվում՝							
			ՀՀ կառավարության պարտք		ՀՀ կենտրոնական բանկի պարտք		Վարկեր, տրամադրված ՀՀ կառավարության և ԿԲ երաշխիքներով		Հատուկ ծրագրեր	
	մլն ԱՄՆ դոլար	%								
2000	859.510	100.0	651.036	75.7	175.453	20.4	19.120	2.2	11.895	1.4
2001	905.467	100.0	684.272	75.6	172.459	19.0	27.854	3.1	20.882	2.3
2002	1025.507	100.0	793.134	77.3	194.802	19.0	19.438	1.9	18.133	1.8
2003	1097.676	100.0	872.186	79.5	214.639	19.6	7.341	0.7	3.510	0.3
2004	1182.934	100.0	917.030	77.5	217.629	18.4	5.243	0.4	3.032	0.3
2005	1099.232	100.0	916.418	83.4	176.397	16.0	3.146	0.3	3.272	0.3
2006	1205.635	100.0	1036.863	86.0	163.671	13.6	1.049	0.1	4.052	0.3
2007	1448.905	100.0	1257.162	86.8	191.749	13.2	0.000	0.0	0.000	0.0
2008	1577.106	100.0	1401.077	88.8	176.029	11.2	0.000	0.0	0.000	0.0
2009	2966.677	100.0	2565.921	86.5	500.756	16.9	0.000	0.0	0.000	0.0
2010	3299.021	100.0	2736.394	82.9	562.627	17.1	0.000	0.0	0.000	0.0
2011	3568.197	100.0	2950.865	82.7	617.331	17.3	0.000	0.0	0.000	0.0
2012	3739.090	100.0	3144.476	84.1	594.614	15.9	0.000	0.0	0.000	0.0
2013	3899.063	100.0	3390.794	87.0	508.269	13.0	0.000	0.0	0.000	0.0
2014	3785.208	100.0	3345.255	88.4	439.953	11.6	0.000	0.0	0.000	0.0
2015	4316.219	100.0	3839.882	89.0	476.337	11.0	0.000	0.0	0.000	0.0
2016	4805.588	100.0	4300.923	89.5	504.665	10.5	0.000	0.0	0.000	0.0
2017	5494.902	100.0	4893.364	89.1	601.538	10.9	7.396	0.1	0.000	0.0
2018	5532.900	100.0	4982.800	90.1	550.000	9.9	0.142	0.0	0.000	0.0

Աղբյուրը կազմվել ու հաշվարկվել է 2000-2018 թվականների Հայաստանի վիճակագրական տարեգրքերի (www.armstat.am) և «ՀՀ կառավարության պարտքը» ամսական ամփոփ տեղեկագրի (2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, www.minfin.am) տվյալներով:

Նկատի ունենալով նշված հանգամանքը, ինչպես նաև այն, որ առաջիկա տարիներին ամենևին էլ չի բացառվում արտաքին պետական պարտքի

ավելացումը²⁴⁵ օրակարգային հրատապություն են ստանում արտաքին պետական պարտքի արդյունավետության գնահատման հիմնահարցերը:

ՀՀ արտաքին պետական պարտքի արդյունավետության գնահատման (համապատասխան գործակիցների հաշվարկման միջոցով)²⁴⁶ և մակրոտնտեսական ցուցանիշների միջև համեմատական վերլուծություն իրականացնելու նպատակով ընտրվել ենք մի քանի հիմնական ցուցանիշ, որոնցից են՝ երկրի ՀՆԱ-ն՝ որպես տնտեսությունը լավագույնս բնութագրող ցուցանիշ, այնուհետև՝ զբաղվածության մակարդակը ՀՀ-ում՝ առաջնորդվելով այն կանխադրությամբ, որ տարբեր վարկային ծրագրերի շնորհիվ երկրում տնտեսական աճի համար նպաստավոր պայմանների ապահովումը ենթադրում է նաև նոր աշխատատեղերի ստեղծում տնտեսության տարբեր հատվածներում, արտահանման ցուցանիշը, որն արտացոլում է համաշխարհային շուկայի համար երկրի մրցունակ արտադրանք թողարկելու հնարավորությունները: Վերլուծվել են նաև զուտ արտահանման, արտաքին առևտրի համեմատական առավելությունների գործակիցները, ինչպես նաև հանրապետության վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդի և արտաքին պետական պարտքի միջև կապի ցուցանիշները:

ՀՆԱ-ի և արտաքին պետական պարտքի համեմատական արդյունավետության գործակիցները: ՀՆԱ-ի հավելածի և արտաքին պետական պարտքի հավելածի ցուցանիշների համեմատական արդյունավետության գործակիցները (k_1) հաշվարկվել են համաձայն ներկայացված (1) բանաձևի.

$$k_1 = \frac{\left(\frac{GDP_n}{GDP_{n-1}} \times 100\%\right) - 100\%}{\left(\frac{ED_n}{ED_{n-1}} \times 100\%\right) - 100\%} \quad (1)$$

որտեղ՝ GDP_n -ն ընթացիկ տարվա ՀՆԱ-ի ցուցանիշն է բացարձակ արժեքով,

GDP_{n-1} -ը՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը,

ED_n -ն ընթացիկ տարվա արտաքին պետական պարտքի ցուցանիշն է բացարձակ արժեքով, ED_{n-1} -ը՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

Հաշվարկների արդյունքներն ամփոփված են աղյուսակ 2-ում, որի տվյալները վկայում են, որ 2000-2008թթ. ընթացքում ՀՆԱ-ի և արտաքին պետական պարտքի

²⁴⁵ Նկատենք, որ դեռևս 2017թ.-ին ՀՀ կառավարության և ֆինանսների նախարարության պատվերով Արժույթի Միջազգային Հիմնադրամն իրականացրել է «Հայաստանի Հանրապետություն հարկաբյուջետային կանոնների արդիականացում» հետազոտությունը (նախագիծը՝ ՀՀ ֆինանսների նախարարության www.minfin.am կայքում), որի եզրակացություններից մեկն այն էր, որ ՀՀ-ում պետական պարտքի վերին շեմը պետք է պահպանվի ՀՆԱ-ի 60 տոկոսի չափով: Չեկոյցում բերված են փորձագետների վերլուծություններն ու հիմնավորումները: Մյուս կողմից էլ, հատկապես վերջին ժամանակահատվածում, կարծիքներ են հնչում, որ ՀՀ տնտեսության զարգացման հիմնական մայրուղին արտաքին պետական պարտք վերցնելն է: Տե՛ս, մասնավորապես. «Հորդորում եմ կատարել տնտեսության զարգացման այդ համարձակ քայլը. Արայիկ Հարությունյանի բաց նամակը՝ Փաշինյանին» (հղվածի հղումը՝ <https://news.am/arm/news/498140.html>), որում հեղինակը եզրակացնում է. «Ընդամենը 10-12 տարում 22 մլրդ ԱՄՆ դոլար պետական պարտքի ավելացման արդյունքում ՀՀ ՀՆԱ-ն կկազմի ավելի քան 45 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ բնակչության մեկ շնչի հաշվով՝ 15,000 ԱՄՆ դոլար»:

²⁴⁶ Տե՛ս, մասնավորապես, IMF (International Monetary Fund) and World Bank. 2003. *Guidelines for Public Debt Management - Amended*. Washington, DC: IMF and World Bank. Internet source: <http://www.imf.org/external/np/mfd/pdebt/2003/eng/am/index.htm>.

ցուցանիշներն ունեցել են փոփոխման համանման ուղղություն՝ որոշակի տատանումներով: Բացառություն է կազմել 2005թ.-ը, երբ նկատվել է ցուցանիշների փոփոխման հակադարձ միտում. այն է՝ ՀՆԱ-ի կայուն բարձր աճի պայմաններում դիտվել է արտաքին պետական պարտքի կրճատում: Նշված ժամանակահատվածը, թերևս, առավել բարենպաստն էր ՀՀ տնտեսության համար (այդ հանգամանքը հիմնականում պայմանավորված էր համաշխարհային տնտեսության վերելքի փուլով), որին անմիջապես հաջորդել է 2009թ. կրիտիկական ժամանակահատվածը, երբ տնտեսության անկումն ուղեկցվեց արտաքին պետական պարտքի բեռի նկատելի ավելացմամբ: Սակայն 2010թ.-ից հանրապետության մակրոտնտեսական ցուցանիշները վերադարձել են նախաճգնաժամային վիճակին: 2010-2013թթ. և 2017-2018թթ. ընթացքում ՀՆԱ-ի և արտաքին պետական պարտքի ցուցանիշներն ունեցել են փոփոխման համանման ուղղություններ, իսկ դիտարկվող ժամանակահատվածի՝ 2009թ.-ին և 2014-2016թթ.-ին ՀՆԱ-ի ու արտաքին պետական պարտքի ցուցանիշներն ունեցել են փոփոխման հակառակ ուղղություններ:

Վերը նշված հանգամանքը հիմքեր է ստեղծում ենթադրելու, որ ՀՀ նախաճգնաժամային (2009թ.-ին նախորդող) հատվածում հանրապետությունում նշմարվել են կայուն տնտեսական աճի նախադրյալներ, որոնց կախվածությունն արտասահմանյան վարկային ֆինանսավորումից հետզհետե թուլանում էր: Այնուհանդերձ, իրադրությունը կտրուկ փոխվեց 2009թ.-ի ճգնաժամի աննախադեպ անկման հետևանքով (երրորդ ամենավատ ցուցանիշն աշխարհում), երբ դիտարկվող ժամանակահատվածում ՀՆԱ-ի բացարձակ արժեքն առաջին անգամ անկում ունեցավ, իսկ պետական բյուջեի էական բացասական մնացորդը հնարավոր եղավ ծածկել միայն հսկայական արտաքին պետական պարտքի կուտակման պայմաններում:

Աղյուսակ 2

ՀՀ ՀՆԱ-ի և արտաքին պետական պարտքի հավելաճերի համեմատական արդյունավետության գործակիցները 2000-2018 թթ.-ին

Տարիները, ժամանակահատվածները	ՀՆԱ (մլն ԱՄՆ դոլար)	ՀՆԱ-ի հավելաճի տեմպը, %	Արտաքին պետական պարտք, մլն ԱՄՆ դոլար	Արտաքին պետական պարտքի հավելաճի տեմպը, %	Համեմա- տական արդյունա- վետության գործակից- ները
2000	1912	3.60	859.510	-1.24	-2.90
2001	2118	10.77	905.467	5.35	2.02
2002	2376	12.18	1025.507	13.26	0.92
2003	2807	18.14	1097.676	7.04	2.58
2004	3577	27.43	1182.934	7.77	3.53
2005	4900	36.99	1099.232	-7.08	-5.23
2006	6384	30.29	1205.635	9.68	3.13
2007	9206	44.20	1448.905	20.18	2.19
2008	11662	26.68	1577.106	8.85	3.02

2000-2008թթ. միջին տարեկան ցուցանիշները	4993.6	23.36	1155.8	7.09	3.30
2009	8648.0	-25.84	2966.677	88.11	-0.29
2010	9260.0	7.08	3299.021	11.20	0.63
2011	10142.0	9.52	3568.197	8.16	1.17
2012	10619.4	4.71	3739.090	4.79	0.98
2013	11121.3	4.73	3899.063	4.28	1.10
2014	11609.5	4.39	3785.208	-2.92	-1.50
2015	10553.3	-9.10	4316.219	14.03	-0.65
2016	10546.1	-0.07	4805.588	11.34	-0.01
2017	11536.5	9.39	5494.902	14.34	0.65
2018	12428.0	7.73	5532.900	0.69	11.17
2009-2018թթ. միջին տարեկան ցուցանիշները	10646.4	1.25	4140.7	15.40	1.33
2000-2018 միջին տարեկան ցուցանիշները	7968.7	11.73	2726.8	11.46	1.18

Աղյուսակը կազմվել ու հաշվարկվել է ՀՀ ԱՎԾ-ի (ՀՀ վիճակագրական կոմիտեի) 2000-2018 թվականների Հայաստանի վիճակագրական տարեգրքերի և մյուս պաշտոնական տվյալների հիման վրա:

Այդ է վկայում նաև ՀՆԱ-ի և արտաքին պետական պարտքի միջև կապի խզումը 2009թ.-ին²⁴⁷: Սակայն 2010թ. ՀՆԱ-ի և արտաքին պետական պարտքի միջև դարձյալ նկատվել է ուժեղ դրական համեմատական կախվածություն, երբ արտաքին պետական պարտքի 1%-ով աճը պայմանավորել է ՀՆԱ-ի 0,63% աճ: 2011թ., 2013թ. և 2018թ.-ի փոփոխականների միջև դարձյալ նկատվել է ուժեղ դրական համեմատական կախվածություն, երբ արտաքին պետական պարտքի 1%-ով աճը պայմանավորել է, համապատասխանաբար, ՀՆԱ-ի 1,17%, 1,10% և 11,17% հավելում: 2014-2016թթ. փոփոխականների միջև նկատվել է հակադարձ կապ, իսկ 2018թ.-ին դարձյալ նկատվել է ուժեղ դրական համեմատական կախվածություն, երբ արտաքին պետական

²⁴⁷ Կարևոր է նկատել, որ ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքը հայկական դրամի նկատմամբ 2008թ.-ի 306.0-ի փոխարեն 2009թ.-ին կազմել է 363.3 (աճը՝ 118.7%, որը 2000-2018թթ. ժամանակահատվածի ամենաբարձր ցուցանիշն էր, իսկ երկրորդ ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2015թ.-ին, երբ ԱՄՆ դոլարի փոխարժեքը կազմում էր 477.9 ՀՀ դրամ, որը նախորդ տարվա (2014թ.-ի) ցուցանիշը գերազանցում էր 114.9%-ով): Թեև ՀՀ ՀՆԱ-ն հետզհետեաժամային հատվածում ունեցել է աճի ցուցանիշներ, սակայն դոլարային արտահայտությամբ 2010-2018թթ. ՀՆԱ-ի մեծությունները չգերազանցեցին նախաճանաչմային 2008թ.-ի ՀՆԱ-ի մեծությունը: Այդ պատճառով էլ, կարծում ենք, որ մեր ուսումնասիրությունում դոլարային արտահայտությամբ մակրոտնտեսական ցուցանիշների օգտագործումն արդարացված և ավելի քան հիմնավորված է:

պարտքի 1%-ով հավելածը պայմանավորել է ՀՆԱ-ի 11,17% հավելում:

Ընդհանուր առմամբ, 2000-2008թթ. միջին տարեկան ցուցանիշների վերլուծությունից հետևում է, որ ՀՀ ՀՆԱ-ի և արտաքին պետական պարտքի համեմատական արդյունավետության գործակիցը կազմել է 3,30%, 2009-2018թթ. միջին տարեկան ցուցանիշը՝ 1,33%, ինչն ավելի քան 2,5 անգամ ցածր է նախորդ ժամանակահատվածի ցուցանիշից (այդ հանգամանքը պայմանավորված է 2009թ.-ի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքներով): Իսկ 2000-2018թթ. ժամանակահատվածի համար վերը նշված համեմատական արդյունավետության գործակիցը կազմել է 1,18%, ինչը նշանակում է, որ այդ ժամանակահատվածում արտաքին պետական պարտքն ունեցել է ցածր արդյունավետություն (քանի որ համեմատական արդյունավետության գործակիցը փոքր չափով (0,18%) է մեծ 1-ից):

Այսպիսով, ՀՆԱ-ի և արտաքին պետական պարտքի արդյունավետության գործակիցների համեմատական վերլուծությունը և դրանց միջև կապերի խիստ տատանողական բնույթն առանձին տարիների և ժամանակահատվածներում թույլ են տալիս եզրակացնելու, որ արտաքին պետական պարտքի օգտագործումն ունեցել է ցածր արդյունավետություն (համեմատական արդյունավետության գործակիցը 2000-2018թթ. ժամանակահատվածում փոքր չափով է մեծ եղել 1-ից): ՀՀ-ում տնտեսական աճի և մյուս մակրոտնտեսական ցուցանիշների միջև կապերի ուսումնասիրությունն ու վերլուծությունը բերված է առանձին հետազոտողների աշխատություններում²⁴⁸:

Զբաղվածության և արտաքին պետական պարտքի համեմատական արդյունավետության գործակիցները: ՀՀ արտաքին պետական պարտքի և զբաղվածության հավելածի տեմպերի համեմատական արդյունավետության գործակիցները (k_2) հաշվարկվել են համաձայն հետևյալ (2) բանաձևի.

$$k_2 = \frac{\left(\frac{EN_n}{EN_{n-1}} \times 100\%\right) - 100\%}{\left(\frac{ED_n}{ED_{n-1}} \times 100\%\right) - 100\%} \quad (2)$$

որտեղ՝ EN_n -ն ընթացիկ տարվա զբաղվածության ցուցանիշն է բացարձակ արժեքով, EN_{n-1} -ը՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

ED_n -ն ընթացիկ տարվա արտաքին պետական պարտքի ցուցանիշն է բացարձակ արժեքով, ED_{n-1} -ը՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

Արտաքին պետական պարտքի հավելածի տեմպի ու զբաղվածության մակարդակի փոփոխության համեմատությունը (աղյուսակ 3) ցույց է տալիս, որ ի տարբերություն արտաքին պետական պարտքի՝ դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ տնտեսությունում զբաղվածության մակարդակի կտրուկ տատանում չի նկատվել, թեև սկսած 1990-ական թվականներից զբաղվածության մակարդակը հիմնականում ունեցել է նվազման միտում՝ անկախ տնտեսական աճի տեմպերից, ինչը, թերևս, պայմանավորված է նաև բնակչության արտագաղթով: Զբաղվածության մակարդակի աճ արձանագրվել է միայն 2003թ., 2005թ., 2007թ., 2008թ., 2010թ. և 2017թ.-ին:

²⁴⁸ Տե՛ս, օրինակ, Մարկոսյան Ա. «Քոչարյանական «աճի» առասպելը».- Երևան., «Անտարես» հրատ., 2018թ., 120 էջ:

Աղյուսակ 3

**ՀՀ-ում զբաղվածության և արտաքին պետական պարտքի հավելածների
համեմատական արդյունավետության գործակիցները 2000-2017 թթ.-ին**

Տարիները, Ժամանակա- հատվածները	Զբաղվածու- թյուն, 1000 մարդ	Զբաղվածու- թյան հավելածի տեմպը, %	Արտաքին պետական պարտքը, մլն ԱՄՆ դոլար	Արտաքին պետական պարտքի հավելածի տեմպը, %	Համեմա- տական արդյունա- վետության գործակիցները
2000	1277.7	-1.58	859.510	-1.24	1.27
2001	1264.9	-1.00	905.467	5.35	-0.19
2002	1106.4	-12.53	1025.507	13.26	-0.95
2003	1107.6	0.11	1097.676	7.04	0.02
2004	1081.7	-2.34	1182.934	7.77	-0.30
2005	1097.8	1.49	1099.232	-7.08	-0.21
2006	1092.4	-0.49	1205.635	9.68	-0.05
2007	1101.5	0.83	1448.905	20.18	0.04
2008	1117.6	1.46	1577.106	8.85	0.17
2000-2008թթ. միջին տարեկան ցուցանիշները	1138.6	-1.56	1155.8	7.09	-0.22
2009	1089.4	-2.52	2966.677	88.11	-0.03
2010	1185.2	8.79	3299.021	11.20	0.78
2011	1175.1	-0.85	3568.197	8.16	-0.10
2012	1172.8	-0.20	3739.09	4.79	-0.04
2013	1163.8	-0.77	3899.063	4.28	-0.18
2014	1133.5	-2.60	3785.208	-2.92	0.89
2015	1072.6	-5.37	4316.219	14.03	-0.38
2016	1006.2	-6.19	4805.588	11.34	-0.55
2017	1011.7	0.55	5494.902	14.34	0.04
2009-2017թթ. միջին տարեկան ցուցանիշները	1112.3	-1.02	3986.0	17.04	-0.05
2000-2017 միջին տարեկան ցուցանիշները	1125.4	-1.29	2570.9	12.06	-0.01

Աղյուսակը կազմվել ու հաշվարկվել է ՀՀ ԱՎԾ-ի (ՀՀ վիճակագրական կոմիտեի) 2000-2018 թվականների Հայաստանի վիճակագրական տարեգրքերի տվյալների հիման վրա:

Արտաքին պետական պարտքի հավելածի ու զբաղվածության մակարդակի փոփոխությունն ցուցանիշների համեմատական արդյունավետության գործակիցների համաձայն՝ ՀՀ արտաքին պետական պարտքի ցուցանիշը զբաղվածության մակարդակի վրա հիմնականում ունեցել է բացասական ազդեցություն. արտաքին պետական պարտքն աճել է զբաղվածության մակարդակի նվազման պայմաններում: Նույնիսկ այն տարիներին, երբ երկրում արձանագրվել է զբաղվածության մակարդակի որոշակի աճ (2003թ., 2005թ., 2007թ., 2008թ., 2010թ., 2017թ.), այն ուղեկցվել է արտաքին պետական պարտքի առաջանցիկ աճի տեմպերով: Մասնավորապես, ներկայացված գործակիցների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ 2003թ.-ին զբաղվածության մակարդակի 0.11% հավելածն ապահովվել է արտաքին պետական պարտքի 7.04%-ով հավելածի պայմաններում, իսկ 2010թ.-ին արտաքին պետական պարտքի 11.20% հավելածի պայմաններում նկատվել է զբաղվածության մակարդակի հավելած 8.79%-ով:

Ընդհանուր առմամբ, արտաքին պետական պարտքի հավելածի և զբաղվածների թվաքանակի փոփոխության միջև նկատվել է հակադարձ փոխկապվածություն, այսինքն՝ արտասահմանյան վարկերի ներգրավումը չի նպաստել հանրապետությունում աշխատատեղերի ավելացմանը, այլ ընդհակառակը՝ արտաքին պետական պարտքի ավելացումն անգամ ՀՆԱ-ի առաջանցիկ աճի տեմպերի պայմաններում հանգեցրել է զբաղվածության մակարդակի նվազեցման:

Զուտ արտահանման և արտաքին պետական պարտքի համեմատական արդյունավետության գործակիցները: ՀՀ արտաքին պետական պարտքի և զուտ արտահանման հավելածի տեմպերի համեմատական արդյունավետության գործակիցները (k_3) հաշվարկվել են համաձայն հետևյալ (3) բանաձևի.

$$k_3 = \frac{\left(\frac{NE_n}{NE_{n-1}} \times 100\% \right) - 100\%}{\left(\frac{ED_n}{ED_{n-1}} \times 100\% \right) - 100\%} \quad (3)$$

որտեղ՝ NE_n -ն ընթացիկ տարվա զուտ արտահանման ցուցանիշն է բացարձակ արժեքով, NE_{n-1} -ը՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

ED_n -ն ընթացիկ տարվա արտաքին պետական պարտքի ցուցանիշն է բացարձակ արժեքով, ED_{n-1} -ը՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 4-ում, դիտարկվող ժամանակահատվածում զուտ արտահանման ցուցանիշն ունեցել է բացասական մեծություն՝ տվյալ տարվա արտահանումը զիջել է ներմուծմանը: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր տարի ներմուծման ցուցանիշը մեր երկրում ունեցել է աճի ավելի բարձր հավելածի տեմպ, քան արտահանման ցուցանիշը: Այդպիսի բացասական խզումը մինչև 2014թ.-ն ունեցել է աճի միտում, որից հետո՝ 2015-2016թթ.-ին զգալիորեն կրճատվել է, իսկ 2017-2018թթ.-ին կրկին ունեցել է աճման միտում: Համեմատական արդյունավետության գործակիցի վերլուծությունը ցույց տվեց, որ ուսումնասիրվող ցուցանիշների միջև դրական կապ նկատվել է միայն 2001թ., 2004-2008թթ. և 2017-2018թթ.-ին: Մյուս տարիներին կապը կամ բացակայում է, կամ չնչին է:

ՀՀ զուտ արտահանման ու արտաքին պետական պարտքի հավելածների համեմատական արդյունավետության գործակիցը 2000-2018թթ. համար կազմել է 0.94%, ինչը վկայում է զուտ արտահանման ցուցանիշի էական վատթարացման մասին: Հատկապես բնութագրական է, որ այդ ցուցանիշը 2009-2018թթ.

Ժամանակահատվածում կազմել է 0.56%, որը 2000-2008թթ. ժամանակահատվածի համեմատությամբ (3.49%) հսկայական տարբերություն է:

Աղյուսակ 4

ՀՀ զուտ արտահանման և արտաքին պետական պարտքի հավելաճերի համեմատական արդյունավետության գործակիցները 2000-2018 թթ.-ին

Տարիները, Ժամանակա- հատվածները	Զուտ արտահան- ման ծավալները (մլն ԱՄՆ դոլար)	Զուտ արտահան- ման հավելաճի տեմպը, %	Արտաքին պետական պարտքը, մլն ԱՄՆ դոլար	Արտաքին պետական պարտքի հավելաճի տեմպը, %	Համեմա- տական արդյունա- վետության գործակից- ները
2000	-587.6	1.38	859.510	-1.24	-1.11
2001	-684.8	16.54	905.467	5.35	3.09
2002	-595.8	-13.00	1025.507	13.26	-0.98
2003	-593.9	-0.32	1097.676	7.04	-0.05
2004	-627.8	5.71	1182.934	7.77	0.73
2005	-827.8	31.86	1099.232	-7.08	-4.50
2006	-1206.5	45.75	1205.635	9.68	4.73
2007	-2115.5	75.34	1448.905	20.18	3.73
2008	-3368.9	59.25	1577.106	8.85	6.70
2000- 2008թթ. միջին տարեկան ցուցանիշները	-1178.7	24.72	1155.8	7.09	3.49
2009	-2552.9	-24.22	2966.677	88.11	-0.27
2010	-2707.8	6.07	3299.021	11.20	0.54
2011	-2811.0	3.81	3568.197	8.16	0.47
2012	-2881.0	2.49	3739.09	4.79	0.52
2013	-2907.2	0.91	3899.063	4.28	0.21
2014	-2877.1	-1.04	3785.208	-2.92	0.35
2015	-1753.9	-39.04	4316.219	14.03	-2.78
2016	-1481.8	-15.51	4805.588	11.34	-1.37
2017	-1939.8	30.91	5494.902	14.34	2.15
2018	-2017.2	3.99	5532.9	0.69	5.77

2009-2018թթ. միջին տարեկան ցուցանիշները	-2393.0	-3.16	4140.7	15.40	0.56
2000-2018 միջին տարեկան ցուցանիշները	-1817.8	10.05	2726.8	11.46	0.94

Աղյուսակը կազմվել ու հաշվարկվել է ՀՀ ԱՎԾ-ի (ՀՀ վիճակագրական կոմիտեի) 2000-2018 թվականների Հայաստանի վիճակագրական տարեգրքերի և ՀՀ ԿԱ ՊԵԿ 2000-2018թթ. «Արտաքին առևտրի մաքսային վիճակագրության» տվյալների հիման վրա:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ արտաքին պետական պարտքի և զուտ արտահանման ցուցանիշների միջև գոյություն ունի հակադարձ կախվածություն, այսինքն՝ անընդհատ ավելացող արտաքին պարտքի ծավալները բացասական ազդեցություն են ունենում զուտ արտահանման բացասական հաշվեմնացորդի վրա: Բացի վերը նշված ցուցանիշներից միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում²⁴⁹ օգտագործվում է նաև համեմատական առավելությունների գործակիցը²⁴⁹, որն ըստ էության բնութագրում է երկրի մասնագիտացման աստիճանը: Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$ՀԱԳ = \frac{U - \bar{U}}{U + \bar{U}} \times 100 \quad (4)$$

որտեղ՝ ՀԱԳ-ը՝ համեմատական առավելությունների գործակիցն է, Ա-ն՝ արտահանման ծավալը, Ն-ն՝ ներմուծման ծավալը:

ՀԱԳ-ը տատանվում է [-1, +1] կամ [-100%, +100%] միջակայքում (տոկոսային արտահայտության դեպքում): Ըստ որում՝ ՀԱԳ-ը -1 կամ -100% մեծություն է ստանում, երբ երկիրը միայն ներմուծում է, իսկ +1 կամ +100 մեծություն, երբ երկիրը միայն արտահանում է: Որքան որևէ երկրի ՀԱԳ-ը մոտ է +1-ին կամ +100%-ին, այնքան բարձր է տվյալ երկրի մասնագիտացման աստիճանը և ընդհակառակը: Քանի որ երկրի ՀԱԳ-ն իր մեջ խտացնում է երկրի ապրանքների ու ծառայությունների արտահանման ու ներմուծման ողջ ներուժը, այն իր մեջ խտացնում է ինչպես երկրի միկրո- և մակրոտնտեսության, այնպես էլ մեզատնտեսության որակը:

Արտաքին առևտրի համեմատական առավելությունների ու արտաքին պետական պարտքի համեմատական արդյունավետության գործակիցները: ՀՀ արտաքին պետական պարտքի ու արտաքին առևտրի համեմատական առավելությունների գործակիցների հավելածերի տեմպերի համեմատական արդյունավետության գործակիցները (k_4) հաշվարկվել են համաձայն հետևյալ (5) բանաձևի.

²⁴⁹ Մարկոսյան Ա., Հախվերդյան Դ., Նազարյան Գ., «Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում», Ե., «ԱՌՏ», 2002թ., էջ 22, Մարկոսյան Ա., Հախվերդյան Դ., Նազարյան Գ., «Միջազգային տնտեսական հարաբերություններ», Եր., ԵրճՇԴՀ, 2012թ., հատոր I, էջ 32:

$$k_4 = \frac{\left(\frac{CA_n}{CA_{n-1}} \times 100\%\right) - 100\%}{\left(\frac{ED_n}{ED_{n-1}} \times 100\%\right) - 100\%} \quad (5)$$

որտեղ՝ CA_n -ն ընթացիկ տարվա համեմատական առավելությունների գործակիցն է բացարձակ արժեքով, CA_{n-1} -ը՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

ED_n -ն ընթացիկ տարվա արտաքին պետական պարտքի ցուցանիշն է բացարձակ արժեքով, ED_{n-1} -ը՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

Աղյուսակ 5-ի տվյալներից հետևում է, որ 2000-2018թթ. ՀՀ արտաքին առևտրի ՀԱԳ-երն ունեցել են բացասական մեծություն: Ըստ որում այն ամենամեծ բացասական մեծությունն է ունեցել 2009թ.-ին (-0.624), իսկ ամենափոքր արժեքը՝ 2016թ.-ին (-0.293):

Աղյուսակ 5

ՀՀ արտաքին առևտրի համեմատական առավելությունների գործակիցների (ՀԱԳ) և արտաքին պետական պարտքի հավելածների համեմատական արդյունավետության գործակիցները 2000-2018թթ.-ին

Տարիները, ժամանակահատվածները	ՀԱԳ-երը	ՀԱԳ-երի հավելածի տեմպը, %	Արտաքին պետական պարտքը, մլն ԱՄՆ դոլար	Արտաքին պետական պարտքի հավելածի տեմպը, %	Համեմատական արդյունավետության գործակիցները
2000	-0.497	-10.63	859.510	-1.24	8.57
2001	-0.528	6.25	905.467	5.35	1.17
2002	-0.370	-29.91	1025.507	13.26	-2.26
2003	-0.302	-18.32	1097.676	7.04	-2.60
2004	-0.303	0.18	1182.934	7.77	0.02
2005	-0.298	-1.49	1099.232	-7.08	0.21
2006	-0.380	27.35	1205.635	9.68	2.82
2007	-0.479	26.02	1448.905	20.18	1.29
2008	-0.614	28.37	1577.106	8.85	3.21
2000-2008թթ. միջին տարեկան ցուցանիշները	-0.419	3.09	1155.77	7.09	0.44

2009	-0.624	1.61	2966.677	88.11	0.02
2010	-0.565	-9.45	3299.021	11.20	-0.84
2011	-0.513	-9.25	3568.197	8.16	-1.13
2012	-0.511	-0.45	3739.09	4.79	-0.09
2013	-0.496	-2.93	3899.063	4.28	-0.69
2014	-0.482	-2.81	3785.208	-2.92	0.96
2015	-0.371	-22.95	4316.219	14.03	-1.64
2016	-0.293	-21.20	4805.588	11.34	-1.87
2017	-0.302	3.19	5494.902	14.34	0.22
2018	-0.295	-2.32	5532.9	0.69	-3.36
2009-2018թթ. միջին տարեկան ցուցանիշները	-0.445	-6.66	4140.7	15.40	-0.84
2000-2018 միջին տարեկան ցուցանիշները	-0.433	-2.04	2726.8	11.46	0.21

Աղյուսակը կազմվել և հաշվարկվել է ՀՀ ԱՎԾ-ի (ՀՀ վիճակագրական կոմիտեի) 2000-2018 թվականների Հայաստանի վիճակագրական տարեգրքերի և ՀՀ ԿԱ ՊԵԿ 2000-2018թթ.

«Արտաքին առևտրի մաքսային վիճակագրության» տվյալների հիման վրա:

Ընդհանուր առմամբ 2000-2009թթ.-ին նկատվել է ՀՀ արտաքին առևտրի ՀԱԳ-երի աճ (2000թ.-ի -0.497-ից 2009թ.-ին այն հասել է -0.624-ի), ինչը նշանակում է համաշխարհային շուկայում երկրի ընթացիկ հաշվի նկատելի վատթարացում, ինչն էլ, ի վերջո, հանգեցրել է զգալի մեծությամբ (շուրջ 2 անգամ) արտաքին պետական պարտքի ավելացման: 2010-2018թթ. ՀՀ արտաքին առևտրի ՀԱԳ-երն ունեցել են նվազման միտում (2009թ.՝ -0.624-ից 2018թ.՝ 0.295): Այդ ամենով հանդերձ, եթե 2000-2008թթ. միջին տարեկան ՀԱԳ-երի մեծությունը կազմել է -0.419, հավելածի տեմպը՝ 3.09%, ապա արտաքին պետական պարտքի հավելածի տեմպը կազմել է 7.09%, իսկ համեմատական արդյունավետության գործակիցը՝ 0.44: Այսինքն՝ նշված ժամանակահատվածում ՀԱԳ-երի վրա արտաքին պետական պարտքի ազդեցությունը եղել է անարդյունավետ, քանի որ համեմատական արդյունավետության գործակիցը եղել է 1-ից զգալիորեն փոքր: 2000-2018թթ. միջին տարեկան համեմատական արդյունավետության գործակիցը նույնպես ունեցել է 1-ից շուրջ 5 անգամ փոքր արժեք (0.21), ինչը նույնպես վկայում է ՀՀ արտաքին առևտրի վրա արտաքին պետական պարտքի անարդյունավետ ազդեցության մասին:

Արտաքին աշխարհի հետ երկրի տնտեսական փոխհարաբերությունների պատկերը լավագույնս դրսևորվում ու արտացոլվում է վճարային հաշվեկշռի և Նրա հաշվեմնացորդի տարբերության միջոցով: Ըստ որում՝ եթե վերջինս դրական է, ապա այն արձանագրում է, որ երկիրը շահում է այդ փոխհարաբերություններից և ընդհակառակը:

ՀՀ վճարային հաշվեկշռի (տարեկան) առանձին հոդվածները և հաշվեմնացորդի տարբերությունը 2000-2018թթ., մլն ԱՄՆ դոլար

	2000	2005	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
1. Ընթացիկ հաշիվ	-301.7	-123.9	-1,261.4	-1,058.9	-1,057.9	-813.0	-882.9	-272.4	-238.1	-279.7	-1,130.6
Ապրանքներ և ծառայություններ	531.8	782.6	2,326.5	2,175.6	2,214.0	2,321.1	2,168.9	1,281.8	1,015.8	1,403.3	1,913.8
Ապրանքներ	466.9	634.7	2,065.7	2,109.8	2,111.9	2,196.2	2,055.4	1,186.4	-944.4	1,375.4	1,766.0
Ծառայություններ	-64.8	-147.9	-260.8	-65.8	-102.1	-125.0	-113.5	-95.4	-71.4	-27.9	-147.8
Սկզբնական եկամուտներ	59.0	206.0	458.3	360.1	423.0	682.5	541.1	442.9	224.2	463.3	162.1
Երկրորդային եկամուտներ	171.1	452.7	606.8	756.7	733.1	825.6	744.9	566.5	553.4	660.3	621.1
2. Կապիտալի հաշիվ	13.0	84.0	98.9	94.6	108.4	84.4	70.4	65.3	34.9	46.3	67.6
3. Ֆինանսական հաշիվ	-216.1	-203.3	-1,318.5	-1,001.0	-759.0	-1,027.8	-848.9	-356.5	-431.6	-540.1	-689.2
Պահուստային ակտիվներ	19.2	214.0	-128.7	132.9	-48.3	470.6	-659.6	332.9	454.6	49.8	-46.3
Չուտ սխալներ և բացթողումներ	72.6	-163.4	-155.9	-36.8	190.5	-299.2	-36.5	-149.3	-228.3	-306.7	373.8
Վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդի տարբերությունը	-413.0	-192.7	-2,765.7	-1,869.2	-1,566.2	-1,585.0	-2,357.5	-380.0	-408.5	-1,030.4	-1,424.8

Աղբյուրը կազմվել ու հաշվարկվել է ՀՀ կենտրոնական բանկի տվյալներով,
ինտերնետային հղումը սկզբնաղբյուրին՝

<https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>

Աղյուսակ 6-ի տվյալները վկայում են, որ 2000-2018թթ. ժամանակահատվածում ՀՀ վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդն ունեցել է բացասական նշան այդ ժամանակահատվածի՝ առանց բացառության բոլոր տարիներին, ինչը խիստ մտահոգիչ է այն առումով, որ երկրի վճարային հաշվեկշռի շարունակական բացասական հաշվեմնացորդն, ի վերջո, հանգեցնելու է արտաքին աղքյուրներից վարկերի ու փոխառությունների ավելացման:

Վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդի և արտաքին պետական պարտքի համեմատական արդյունավետության գործակիցները: ՀՀ արտաքին պետական պարտքի ու վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդի համեմատական արդյունավետության գործակիցները (k_5) հաշվարկվել են համաձայն բանաձևի 6-ի.

$$k_5 = \frac{\left(\frac{BP_n}{BP_{n-1}} \times 100\%\right) - 100\%}{\left(\frac{ED_n}{ED_{n-1}} \times 100\%\right) - 100\%} \quad (6)$$

որտեղ՝ BP_n -ն ընթացիկ տարվա վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդի տարբերությունն է բացարձակ արժեքով, BP_{n-1} -ը՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

ED_n -ն ընթացիկ տարվա արտաքին պետական պարտքի ցուցանիշն է բացարձակ արժեքով, ED_{n-1} -ը՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

Աղյուսակ 7-ի տվյալները վկայում են, որ 2000-2008թթ. միջին տարեկան վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդի տարբերության հավելածի տեմպը կազմել է 121.89%, իսկ արտաքին պետական պարտքի հավելածի տեմպը՝ 8.85%, այսինքն՝ համեմատական արդյունավետության գործակիցը կազմել է 17.20% (այսինքն՝ այդ կապը եղել է հակադարձ. արտաքին պետական պարտքի ավելացմանը զուգահեռ ավելացել է վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդի տարբերությունը): Թեև 2009-2018թթ. վճարային հաշվեկշռի բացասական հաշվեմնացորդը զգալիորեն նվազել է, նորից այդ ժամանակահատվածում արտաքին պետական պարտքի հավելածի տեմպը (15.40%) գերազանցել է վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդի տարբերության հավելածի տեմպին (10.61%): Ընդհանուր առմամբ, 2000-2018թթ. միջին տարեկան համեմատական արդյունավետության գործակիցը կազմել է 5.97%, ինչը վկայում է այն մասին, որ արտաքին պետական պարտքի ավելացմանը զուգահեռ ավելի արագ տեմպերով ավելացել է ՀՀ վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդի տարբերության հավելածի տեմպը:

Մեր կողմից ուսումնասիրված մակրոտնտեսական ցուցանիշների հավելաճերի ու արտաքին պետական պարտքի հավելածի արդյունքում հաշվարկված համեմատական արդյունավետության գործակիցները բերված են աղյուսակ 8-ում:

ՀՀ վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդի և արտաքին պետական պարտքի հավելածների համեմատական արդյունավետության գործակիցները 2000-2018 թթ.-ին

Տարիները, ժամանակա- հատվածները	Վճարային հաշվեկշռի հաշվե- մնացորդի տարբերու- թյունը (մլն ԱՄՆ դոլար)	Վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդի տարբերության հավելածի տեմպը, %	Արտաքին պետական պարտքը, մլն ԱՄՆ դոլար	Արտաքին պետական պարտքի հավելածի տեմպը, %	Համեմա- տական արդյունա- վետության գործա- կիցները
2000	-413.0	42.02	859.510	-1.24	-33.85
2001	-254.8	-38.31	905.467	5.35	-7.16
2002	-82.1	-67.78	1025.507	13.26	-5.11
2003	-99.1	20.71	1097.676	7.04	2.94
2004	-354.7	257.92	1182.934	7.77	33.21
2005	-192.7	-45.67	1099.232	-7.08	6.45
2006	-96.0	-50.18	1205.635	9.68	-5.18
2007	-501.0	421.88	1448.905	20.18	20.91
2008	-3288.7	556.43	1577.106	8.85	62.89
2000-2008թթ. միջին տարեկան ցուցանիշները	-586.9	121.89	1155.775	7.09	17.20
2009	-2279.8	-30.68	2966.677	88.11	-0.35
2010	-2765.7	21.31	3299.021	11.20	1.90
2011	-1869.2	-32.41	3568.197	8.16	-3.97
2012	-1566.2	-16.21	3739.09	4.79	-3.38
2013	-1585.0	1.20	3899.063	4.28	0.28
2014	-2357.5	48.74	3785.208	-2.92	-16.69
2015	-380.0	-83.88	4316.219	14.03	-5.98
2016	-408.5	7.50	4805.588	11.34	0.66
2017	-1030.4	152.24	5494.902	14.34	10.61
2018	-1424.8	38.28	5532.900	0.69	55.35
2009-2018թթ. միջին տարեկան ցուցանիշները	-1566.7	10.61	4140.7	15.40	3.84
2000-2018 թթ. միջին տարեկան ցուցանիշները	-1102.6	63.32	2726.8	11.46	5.97

**ՀՀ առանձին մակրոտնտեսական ցուցանիշների հավելածների և
արտաքին պետական պարտքի հավելածի համեմատական
արդյունավետության գործակիցները**

Տարի- ները, ժամա-նակա- հատված-ները	ՀՆԱ/ արտաքին պետական պարտք	Զբաղվա- ծություն/ արտաքին պետական պարտք	Չուտ արտահա- նում/ արտաքին պետական պարտք	ՀԱԳ-եր/ արտաքին պետական պարտք	Վճարային հաշվեկշռի հաշվեմնա- ցորդ/ արտաքին պետական պարտք
2000	-2.90	1.27	-1.11	8.57	-33.85
2001	2.02	-0.19	3.09	1.17	-7.16
2002	0.92	-0.95	-0.98	-2.26	-5.11
2003	2.58	0.02	-0.05	-2.60	2.94
2004	3.53	-0.30	0.73	0.02	33.21
2005	-5.23	-0.21	-4.50	0.21	6.45
2006	3.13	-0.05	4.73	2.82	-5.18
2007	2.19	0.04	3.73	1.29	20.91
2008	3.02	0.17	6.70	3.21	62.89
2000-2008 միջին տարեկան ցուցանիշները	3.30	-0.22	3.49	0.44	-0.51
2009	-0.29	-0.03	-0.27	0.02	-0.35
2010	0.63	0.78	0.54	-0.84	1.90
2011	1.17	-0.10	0.47	-1.13	-3.97
2012	0.98	-0.04	0.52	-0.09	-3.38
2013	1.10	-0.18	0.21	-0.69	0.28
2014	-1.50	0.89	0.35	0.96	-16.69
2015	-0.65	-0.38	-2.78	-1.64	-5.98
2016	-0.01	-0.55	-1.37	-1.87	0.66
2017	0.65	0.04	2.15	0.22	10.61
2018	11.17	-	5.77	-3.36	55.35
2009-2018թթ. միջին տարեկան ցուցանիշները	1.33	-0.05	0.56	-0.84	3.84
2000-2018 միջին տարեկան ցուցանիշները	1.28	-0.01	0.94	0.21	5.97

* Ժամանակահատվածի վերջնագիծը 2017 թվականն է:
Կազմվել է Նախորդ աղյուսակների տվյալների հիման վրա:

Եզրակացություն: Հետազոտությունը թույլ է տալիս կատարելու հետևյալ եզրահանգումները.

➤ 2000-2018թթ. ժամանակահատվածում շարունակաբար (առանց որևէ թվականի բացառության) ավելացել է ՀՀ արտաքին պետական պարտքը (ըստ երկրանի, 2000-2018թթ.-ին ձևավորվել է «պարտքամուկ» պետություն), որի մեծությունը 2018թ.-ին 2000թ.-ի համեմատությամբ աճել է 643.7%-ով այն դեպքում, երբ ՀՆԱ-ի հավելվածը կազմել է 550%, արտահանմանը՝ 710.7%, ներմուծմանը՝ 400.4%, զուտ արտահանմանը՝ 243.3%, առևտրաշրջանառությանը՝ 470.5%, իսկ զբաղվածության ցուցանիշը նվազել է 20.8%-ով,

➤ ուսումնասիրված ՀՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վրա արտաքին պետական պարտքի ազդեցությունը ադեկվատ չի եղել (հատկապես պատկերը վատ է զբաղվածության ապահովման մասով),

➤ արտաքին պետական փոխառությունների կնքման գործընթացում առաջիկա տարիներին անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ներգրավվող արտաքին պետական պարտքի արդյունավետության ցուցանիշների վրա՝ այն հաշվով, որ դրանք ոչ թե վատացնեն, այլ բարելավեն հանրապետության հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները:

«CRISIS» OF THE STATE DEBT AND EFFICIENCY OF THE EXTERNAL STATE DEBT OF THE REPUBLIC OF ARMENIA

ASHOT MARKOSYAN

*Yerevan State University, Professor of Chair of Business and Management,
Faculty of Economics and Management, Doctor of Economics,
Professor, Yerevan, Republic of Armenia*

ELEONORA MATEVOSYAN

*Yerevan State University. Ph.D. in Economics, Lecturer of the Chair of
Finance and Accounting Faculty of Economics and Management,
Yerevan, Republic of Armenia*

The management of foreign public debt is necessary to ensure the socio-economic development of any country and the building of foreign economic relations. One of the main trends in the development of the world economy, especially over the last 20–30 years, is the outpacing growth of external public debt in comparison with gross domestic product (GDP). At the same time, the growth rate of the external debt of many countries in recent years has exceeded the growth rate of their GDP. In turn, the formation of external public debt has their limit (restrictions), which requires the effective use of borrowed funds. From this point of view, the Republic of Armenia, the external state debt of which is close to the maximum threshold established by the legislation, should first of all solve the problem of the effectiveness of managing this debt. The latter suggests that the growth rate of the country's external public debt should be lower than the growth rate of the main macroeconomic indicators, such as GDP, employment, net exports and the growth rate of a number of other macroeconomic indicators.

Using a certain methodology, the authors conducted a study and assessed the effectiveness of the external public debt of Armenia for the period 2000-2018.

Keywords: *external public debt, external public debt efficiency, comparative efficiency ratio, balance of payments, GDP growth, employment growth, net export growth.*

«КРИЗИС» ГОСУДАРСТВЕННОГО ДОЛГА И ЭФФЕКТИВНОСТЬ ВНЕШНЕГО ГОСУДАРСТВЕННОГО ДОЛГА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

АШОТ МАРКОСЯН

*профессор кафедры бизнеса и управления факультета экономики и управления
Ереванского Государственного Университета, доктор экономических наук,
г.Ереван, Республика Армения*

ЭЛЕОНОРА МАТЕВОСЯН

*ассистент кафедры финансов и бухгалтерского учета факультета экономики и
управления Ереванского государственного университета,
кандидат экономических наук,
г.Ереван, Республика Армения*

Управление внешним государственным долгом необходимо для обеспечения социально-экономического развития любой страны и выстраивания внешнеэкономических связей. Одной из основных тенденций развития мировой экономики, особенно за последние 20–30 лет, является опережающий рост внешнего государственного долга по сравнению с валовым внутренним продуктом (ВВП). В то же время темпы роста внешнего долга многих стран за последние годы превысили темпы роста их ВВП. В свою очередь, формирование внешнего государственного долга имеет свои пределы (ограничения), что требует эффективного использования заемных средств. С этой точки зрения Республика Армения, внешний государственный долг которой близок к максимальному пороговому значению, установленному законодательством, должна прежде всего решить проблему эффективности управления этим долгом. Последнее предполагает, что темпы роста внешнего государственного долга страны должны быть ниже, чем темпы роста основных макроэкономических показателей, таких как ВВП, занятость, чистый экспорт и темпы роста ряда других макроэкономических показателей.

С применением определенной методологии, авторами проведено исследование и дана оценка эффективности внешнего государственного долга Армении за период 2000–2018 годы.

Ключевые слова: *внешний государственный долг, эффективность внешнего государственного долга, сравнительный коэффициент эффективности, платежный баланс, прирост ВВП, рост занятости, прирост чистого экспорта.*